

տես մը կը գրէ թէ «նոյն եկեղեցւոյն գետնին պեղումներէն և քլեան ելած էին ջրհոր մը, կրօնական շէնքի մը պատերը, որ անտարակոյս Հեղինէի շինած եկեղեցւոյն հիմերն էին: Կորնթական խոյակներու, պասկներու, հռոմէական ցցուակներով (moultures) զարդարուած սիւնաբուններուն կտորները տարակոյս չեն թողուր աւերեալ յիշատակարանին ծագման մասին: Մարմարի ահագին քեկորները մեծ դժուարութեամբ սայլերով կը կրէին Յովսափատի ձորը ու հոն կը ծախէին այլոց, որ կտարաւելով անոնցմէ կը շինէին գերեզմանաքարեր: 1873-75ին, լատինք գնեցին այդ գետինը Արաբներէն ու հոն հաստատուեցան Կարմեղեան կրօնաւորուհիք:

Գալով Բլբի եկեղեցւոյն, անոր գետնին մէկ մասին վրայ շատ կանուխէն շինուած էր մզկիթ մը և հաստատուած էին Արաբներ: ԺՁ. դարէն յետոյ, անոր պատերուն և սիւններուն միայն հիմերը կ'երևնային: Իսկ Ոսնասեղւոյն գմբէթաւոր մասուը ազատ կը մնար քանդումներէն:

Դարուս գիտնական հնախօսները սոյն երկու եկեղեցիներուն աւերակաց մնացորդներուն համաձայն, շինած են անոնց յատակագծերն և պատկերացուցած գեղարուեստական զարդերն ու մոզայիքները: Մարդ տեսնելով կ'ապշի անոնց ճարտար կառուցուածքին և յօրինուածքին վրայ: Քրիստոնեան, ի տես անոնց, կ'ըմբռնէ նոյն եկեղեցիները շինողաց կրօնական զգացումները, գաղափարները ու այն ներշնչումները՝ որ անսեսանելիօրէն գետեղուած էին անոնց հողոյն խորը, և գեղարուեստն էր՝ որ պիտի կարենար թոյլ տալու մեզ անոնց նկարներուն, քանդակներուն մէջէն ակնարկ մը ձգելու նոյն բարեպաշտ քրիստոնէից հոգեկան աշխարհին: Քրիստոնեայք երկրի վրայ անմահացած էին երեցող արուեստին մէջ:

4. Ձիթենեաց լեռան վրայ կայի՞ն հայկական վանքեր.

Հայ մատենագրութիւնը Ս. Տեղեաց թէ՛ հայկական վանքերու թէ՛ օտար վանքերու մէջ ապրող հայ միաբանութեանց նկատմամբ դժբախտաբար բառ մը անգամ չէ արձանագրած, հակառակ որ նախնական դարերէ սկսեալ, մեր բնիկ աշխարհէն ուխտաւորական կարաւաններ շարունակ այցելած են Նրուսաւ